ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽՍ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԵՎԱԴԱ ՄՈՒՇԵՂԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ԲԱՑՕԹՅԱ ՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԺԳ.00.02. - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա»
(կերպարվեստ) մասնագիտությամբ մանկավարժական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան
Հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝	Մանկավարժական գիտությունների դոկտոր Լ. Ս. Ներսիսյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Մանկավարժական գիտությունների դոկտոր՝ Մ. Մ. Մանուկյան
	Մանկավարժական գիտությունների թեկնածու՝ Ե. Ա. Գյուլմիսարյան
Առաջատար կազմակերպություն՝	Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2013թ-ի մայիսի 30-ին, ժամը14:00-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲՈՀ-ի 020 «Մանկավարժություն» մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 375010, ք. Երևան. Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ-ի ապրիլի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ Ա. Վ. Ավագյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ժամանակը, որում մենք ապրում ենք, անշուշտ թելադրում է իր պահանջները՝ մասնավորապես կրթության մեջ առաջադրելով ազատ ստեղծագործող, բազմակողմանի զարգացած և կենսունակ անձի խնդիրը: Այս խնդիրն իր ընդհանրության մեջ կարող է լուծվել, եթե աճող սերնդի ուսումնա-դաստիարակչական գործընթացում իր առանձնակի արտացոլումն ունենա գեղարվեստական մանկավարժությունն իր բոլոր դրսևորումներով:

<u>Հետազոտության արդիականությունը</u>: Արդի մանկավարժությունը մտահոգված է ներդաշնակ զարգացած անհատի ձևավորման խնդրով, ինչը, մեր ընկալմամբ, ենթադրում է մարդու գործունեության համաչափելիությունը բնության, հասարակության հետ: Իմացությունն այն օրենքների, որոնցով կարգավորվում է այս փոխադարձ կապը, այն հիմունքներն են, որոնք պետք է փոխանցվեն երեխաներին: Ներդաշնակությունն ընկալելով որպես ձգտում կատարելակերպի ու գեղեցիկի նկատմամբ՝ մանկավարժը պետք է այն ներարկի երեխայի հոգում: Այդ պատճառով էլ արվեստով դաստիարակելու սկզբունքը չի կարելի տարանջատել հասարակության մարդասիրացման ամբողջական ծրագրից, քանի որ արվեստն իր մեջ կրում է մարդու՝ որպես բնության մասնակի գոյության օրենքները:

Հասարակության բացասական շատ երևույթներ պայմանավորված են բարոյական կատարելակերպերի, հոգեկերտվածքի բացակայությամբ: Այս ամենը հասարակությանը վերադարձնելն այսօրվա ամենաէական խնդիրն է:

Ահավասիկ ինչու արդի փուլում անհրաժեշտ է հատկապես լուրջ վերաբերվել աճող սերնդի գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության խնդրին, զարգացնել գեղեցիկի զգացողություն՝ այդ նպատակների համար օգտագործելով ուսումնական տարբեր առարկաներ և, անտարակույս, կերպարվեստի պարապմունքները: Գեղարվեստական ստեղծագործությունները գեղագիտական աշխարհայացքի ու գեղարվեստական ճաշակի, անձի բարոյական որակների ձևավորման վրա նպատակաուղղված ներազդեցության կարևոր բաղադրատարրեր են:

Այս ամենը ենթադրում է դպրոցականների համակարգված գեղարվեստական դաստիարակություն, ուսումնադաստիարակչական միջոցառումների ամենօրյա կիրառություն, կերպարվեստի պարապմունքների՝ այլ առարկաների հետ կապի ապահովում: Կերպարվեստի ուսումնական ծրագրերի բովանդակությունը, հստակ արտահայտված ուղղվածությունն իրատեսական արվեստի նկատմամբ արդյունավետ ազդեցություն են թողնում աշակերտների գեղարվեստական ընկալունակության վրա:

Կերպարվեստի ուսումնական ցանկացած ծրագրի հիմնական ուղղություններից մեկը բնապատկերի ընկալումն ու հարթության վրա նրա վերարտադրումը դպրոցականներին սովորեցնելն է: Բնանկարի մասին առհասարակ շատ է գրվել, սակայն մի շարք հարցեր դեռևս պարզաբանված չեն: Միասնական կարծիք չկա առ այն, թե բարին և գեղեցիկը ստեղծելուն միտված անհա-

տական հատկանիշները որքանով են ազդում բնանկարային հորինվածքների ընկալման և ստեղծագործական լուծման վրա: Դեռևս պետք է հստակ պատասխան տալ այն հարցին, թե բացօթյա նկարչության դասավանդման մանկավարժական արդյունավետ միջոցների, ձևատեսությունների ու հնարքների մշակումը որքանով կօգնի ուսուցչին աճող սերնդի հնարավորինս արդյունավետ զարգացման գործում:

Ուսուցչի մանկավարժական գործունեության բնույթը դպրոցում գեղարվեստական ու մանկավարժական մասնագիտական մեծ փորձ է պահանջում: Ուսուցիչը պետք է սովորեցնի ընկալել և զգալ բնության ներդաշնակությունն ու գեղեցկությունը, զարգացնի աշակերտների ստեղծագործական կենսունակությունը, հետաքրքրություն արթնացնի գիտելիքի նկատմամբ, նպաստի գեղարվեստական մշակույթի յուրացմանը: Հարկ է նշել, որ այդ խնդիրները կապված են ուշադրության, երևակայության, խառնվածքի, դիտողական ընկալման և նկարողի հոգեբանական այլ առանձնահատկությունների զարգացման, ուսումնական խնդիրների ճիշտ ըմբռնման, կերպարվեստային գրագիտության խորը յուրացման հետ: Պատկերի ստեղծումը սովորողների աշխատանքներում կախված է ոչ միայն նկարչական հնարքներից, այլ նաև մտածողության ու պատկերվող առարկաների կառուցման սկզբունքների ընկալման աստիճանից, աշխատանքներում դրանց քննարկման ու մեկնաբանության ձևատեսություններից: Հաստատակամ և հետևողական աշխատանքի արդյունքում աշակերտների մոտ ձևավորվում ու կատարելագործվում են գծանկարի, գունանկարի, ինչպես նաև բացօթյա նկարչությանը ճիշտ մոտեցման կարողություններ ու հմտություններ: Հարկ է նշել, որ աշակերտների գործնական աշխատանքներում հաճախ են հանդիպում պատկերման միջոցների ոչ լիովին հիմնավորված կիրառության դեպքեր բնանկարի ժանրում աշխատելիս, դրանց դերի թերընկալում ուսումնական աշխատանքի բովանդակության հաղորդման և գեղանկարչական խնդիրների լուծման ժամանակ:

Հաճախ աշակերտները չգիտեն, թե ինչպես կարելի է պատկերման միջոցների օգնությամբ հասնել նկարչական գրագիտության ու արտահայտչականության: Դպրոցական ուսումնական գործընթացում անհրաժեշտ է առավել խորությամբ և բազմակողմանիորեն զարգացնել աշակերտների հետաքրքրությունը կերպարվեստի նկատմամբ: Ուսուցիչը կոչված է աշակերտներին ուսուցանել արվեստի ընկալման նրբությունները, նրանց մոտ դաստիարակել տեսողական մշակույթ: Դիտելով նկարը՝ աշակերտը պետք է կարողանա հասկանալ հեղինակի տվյալ «հաղորդագրության» իմաստը և վերապրել այն պահը, որը հնարավորություն է ընձեռում ստեղծագործությունն ընկալել որպես հոգևոր արժեք: Վերը նշվածը վկայում է ատենախոսության մեջ հետազոտության խնդրի արդիականության մասին:

Այս ամենը հիմնախնդրային է դարձնում գիտականորեն հիմնավորված ձևատեսական ցուցումների մշակման հարցը դպրոցների և կերպարվեստային գործունեությամբ զբաղվել ցանկացողների համար: Ելնելով հիմնախնդրի գիտական մշակման վիճակից և մանկավարժական փորձի իրական պահանջ-

ներից՝ առաջարկվող հետազոտությունում առանցքային խնդիր է դրվում լուսաբանել բնակարի ուսուցման ձևատեսությունը հանրակրթական դպրոցում:

Այս խնդիրների լուծմանը միտված մեր հետազոտություններում մենք հիմնվում ենք գեղագիտական դաստիարակության և գեղարվեստական կրթության բնագավառում հայտնի այնպիսի ժամանակակից գիտնականների աշխատությունների և ուսումնական ձեռնարկների վրա, ինչպիսիք են Լ. Ս. Ներսիսյանը, Ա. Ա. Բալյանը, Հ. Հ. Հակոբյանը, Ն. Ն Ռոստովցևը, Գ. Վ. Բեդան, Վ. Ս. Կուզինը, Ե. Վ. Շոռոխովը, Տ. Խ. Կոմարովան. Ն. Պ. Սակուլինան, Ս. Ե. Իգնատևը, Ա. Ե. Տերենտևը: Նշված գիտնականների աշխատությունները էական նշանակություն ունեն բնանկարի ուսուցման մանկավարժական արդյունավետ միջոցների, ձևատեսությունների և օրինակների մշակման համար: Մեզ հետաքրքրող խնդրի առանձին հարցեր արտացոլված են Ռ. Մ. Շիշմանյանի, Մ. Ս. Սարյանի, Ն. Ն. Վոլկովի, Ն. Յա. Մասլովի, Լ. Ա. Վիխոդցևայի և այլ մասնագետների աշխատություններում: Բնության երևույթների, բնապատկերի գեղարվեստական արտացոլման և ուսումնասիրման տեսության ու ձևատեսության հարցերը մեծ ուշադրության են արժանացել անցյալի ու ներկայի այնպիսի հետազոտող-նկարիչների կողմից, ինչպիսիք են Մ. Ս. Սարյանը, Լ. Ս. Ներսիսյանը, Հ. Ս. Իգիթյանը, Ռ. Մ. Շիշմանյանը, Ի. Ե. Ռեպինը, Ի. Ի. Լևիտանը, Ա. Մ. Վասնեցովը, Ֆ. Ա. Վասիլևը, Ի. է. Գրաբարը և այլք:

Նշված հեղինակների աշխատանքների վերլուծությունը համոզիչ կերպով վկայում է, որ զգացմունքայնությունը, հոգևոր հարուստ աշխարհը, ներդաշնակությունը հենց այն արժեքներն են, որոնք ի հայտ են գալիս բնության հետ հաղորդակցության արդյունքում: Սակայն բնանկար կատարելիս բնության հետ շփման միջոցով անձի գեղագիտական, բարոյական հիմունքների ձևավորման հարցերը գիտական աշխատանքներում բավարար չափով լուսաբանված չեն: Խնդրի արդիականությունն ու ոչ լիարժեք մշակվածությունն էլ պայմանավորեցին մեր **<u>հետազոտության թեման</u>՝** «Բացօթյա նկարչության դասավանդման առանձնահատկությունները հանրակրթական դպրոցում»:

<u>Հետազոտության նպատակը</u> բացօթյա նկարչության դասավանդման ժամանակակից ձևատեսության մշակումն է, փորձարարական ստուգումը և գիտական հիմնավորումը հանրակրթական դպրոցում:

<u>Հետազոտության օբյեկտը</u> հանրակրթական դպրոցում կերպարվեստի ուսուցման գործընթացն է:

<u>Հետազոտության առարկան</u> հանրակրթական դպրոցում բացօթյա նկարչության դասավանդման մանկավարժական ուղիները, ձևատեսություններն ու միջոցներն են:

<u>Հետազոտության գիտական ենթադրությունը</u>: Կերպարվեստի պարապմունքներին բնանկարի ուսուցման գործընթացն արդյունավետ կընթանա, եթե.

- բնապատկերը դառնա աշակերտների մոտ բնության նկատմամբ հուզազգացմունքային վերաբերմունքի ձևավորման միջոց,
- հստակեցվի և առանձնացվի բացօթյա նկարչության միջոցներով իրականացվող դաստիարակչական նպատակների բովանդակությունը,

- ապահովվեն պատկերագրման իմացությունների ու հմտությունների ձեռքբերման նոր պայմաններ, դրանց զարգացմանը նպաստող ուսուցման արդյունավետ եղանակներ և ձևատեսություններ:

Նպատակներին և առաջ քաշված գիտական ենթադրությանը համապատասխան որոշարկվել և հստակեցվել են **<u>հետազոտության հետևյալ խնդիրները</u>.**

1. Բացօթյա նկարչության և նրա դասավանդման հիմնախնդրի պատմության ուսումնասիրում:

2. Բացօթյա նկարչության գիտատեսական հիմունքների բացահայտում կերպարվեստի ուսուցման գործընթացում:

3. Աշակերտների տարիքային և անհատական առանձնահատկությունների վերլուծում բացօթյա նկարչության դասավանդման գործընթացում:

4. Հանրակրթական դպրոցում բացօթյա նկարչության դասավանդման մանկավարժական արդյունավետ միջոցների, ձևատեսությունների ու հնարքների մշակում:

<u>Հետազոտության տեսաբանական հիմք</u> են հանդիսացել փիլիսոփայության դասականների, ինչպես նաև հոգեբանության, մանկավարժության, արվեստաբանության ձևատեսաբանական հիմնախնդիրներին նվիրված աշխատությունները, հանրակրթության վերաբերյալ փաստաթղթեր: Մեր հետազոտության համար հիմնարար արժեք են ներկայացնում կերպարվեստի և մանկավարժության ուսուցման տեսության, հոգեբանության և զգայականության վերաբերյալ աշխատությունները:

Հետազոտության ընթացքում առաջադրված խնդիրները լուծելու համար օգտագործվել են **<u>հետազոտության հետևյալ մեթոդները</u>.** խնդրի վերաբերյալ հոգեբանա-մանկավարժական, արվեստաբանական գրականության ուսումնասիրում, տեսական վերլուծություն և համադրություն, հիմնախնդրի տեսաբանական վերլուծություն: Հանրակրթության կառույցների ուսումնական գործընթացի կատարելագործման մասին փաստաթղթերի ուսումնասիրում, ուսումնական գործընթացի դիտում դպրոցներում: Մանկավարժական փորձի ընդհանրացում, հետազոտում, փորձարարական ուսուցման կազմակերպում՝ թեստավորում, հարցում, զրույց, անկետավորում, աշակերտների գործունեության արդյունքի հետազոտում, փորձաքննական տվյալների մշակման վիճակագրական մեթոդներ:

Փորձարարությունն անցկացվել է 3 փուլով՝ Երևանի թիվ 53 միջնակարգ դպրոցում, մարզային ավելի քան չորս միջնակարգ հաստատություններում (Շիրակի մարզի Լեռնակերտ, Արագածոտնի մարզի Քուչակ, Վերին Ագարակ, Վայոց ձորի Հերհեր գյուղերի միջնակարգ դպրոցներում), Ապարանի և Աշտարակի գեղարվեստի դպրոցներում:

Գիտափորձն ընթացել է երեք փուլով:

<u>Առաջին փուլ - 2003-2004թթ</u>.

Գրականության ուսումնասիրություն՝ գծանկարի, գեղանկարի, հորինվածքի, բնանկարի, գունատեսության համակարգերի, դաստիարակության

տեսության, արվեստի, հոգեբանության, մանկավարժության, կերպարվեստի դասավանդման ձևատեսության վերաբերյալ ծրագրեր, ձեռնարկներ, հոդվածներ: Ուսուցիչների և աշակերտների գործունեության հետևողական զննում: Բացօթյա նկարչության դասավանդման աշխատանքային փորձի ուսումնասիրում: Հաճախում կերպարվեստի դասերին և դրանց քննարկում: Հանրակրթական դպրոցում բացօթյա նկարչության դասավանդման տեսական և գործնական առանձին պարապմունքների անցկացում կերպարվեստի ուսուցիչների վերապատրաստման դասընթացների ժամանակ: Հանրակրթական դպրոցում բացօթյա նկարչության բովանդակային ուսուցման դասերի մշակում և անցկացում:

Երկրորդ փուլ - 2005-2007թթ.

Ստուգման է ենթարկվել գիտական ենթադրությունը: Որոշակիացվել է նմուշօրինակի իրականացման հնարավորությունը հաստատող փորձարարության անցկացման ընթացքում բացօթյա նկարչության դասավանդման ընտրված ձևատեսության օգնությամբ: Ձևատեսությունների կանոնակարգում (ձևատեսություններ, հնարքներ):

Երրորդ փուլ - 2008-2010թթ.

Իրականացվել է ստացված նյութի համակարգում, ինչպես նաև հետազոտության ընթացքում մշակված եզրակացությունների ու ձևատեսական հանձնարարությունների առանձին դրույթների ստուգում:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ.

1. Բացահայտվել են բացօթյա նկարչության դասավանդման գիտատեսաբանական հիմունքները կերպարվեստի դասավանդման գործընթացում:

2. Որոշարկվել է հանրակրթական դպրոցի աշակերտների տարիքային և անհատական առանձնահատկությունների դերը բացօթյա նկարչության գործընթացում:

3. Գործնականում մշակվել և հաստատվել են հանրակրթական դպրոցում բացօթյա նկարչության դասավանդման նպատակները, նմուշօրինակները՝ ամրագրելով կերպարվեստի ուսուցման արդյունավետ ձևատեսությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ ստեղծագործական ունակությունների զարգացման հիման վրա մշակված և փորձարկված ծրագիրը կարող է ապահովել աշակերտների գեղարվեստական կրթության, նրանց գեղագիտական դաստիարակության և ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումն ու զարգացումը՝ նպաստելով աշակերտների ստեղծագործական ունակությունների բացահայտմանը:

Հետազոտության գործնական նշանակությունը: Մշակվել է հանրակրթական դպրոցի 1-ից 7-րդ դասարաններում բացօթյա նկարչության դասավանդման ժամանակակից մեթոդ: Այդ մեթոդի բաղկացուցիչ մաս է հանդիսանում իրազննական, ուսումնաձևատեսական ձեռնարկների և պիտույքների համակարգը (դասերին և արտադասարանական աշխատանքի գործընթացում բացօթյա նկարչության դասավանդման վերաբերյալ աղյուսակների կիրառություն, ձևատեսական հանձնարարություններ և այլն):

Փորձարկումը և ստացված արդյունքների ներդրումը: Հետազոտության տեսական գաղափարները, հիմնական դրույթները և արդյունքներն արտացոլվել են հեղինակի մի շարք հրապարակումներում («Գեղարվեստական միտք», թիվ 1, Երևան 2005թ., «Մխիթար Գոշ», թիվ 1, Երևան 2006թ., «Մխիթար Գոշ», թիվ 4, Երևան 2007թ., «Գեղարվեստական միտք», թիվ 1, Երևան 2008թ., ՀՊՄՀ 53-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, «Մանկավարժ» հրատ., Երևան 2008թ., Պրակ 2, «Գեղարվեստական միտք», թիվ 1, Երևան 2009թ., «Հոգեբանությունը և կյանքը», թիվ 3-4, Երևան 2009թ., «Պլեներային ուսումնական գործընթաց» (Ձևատեսական ցուցումներ), Հեղինակային հրատ. Երևան 2009թ., «Հոգեբանությունը և կյանքը», թիվ 1-2, Երևան 2010թ., ՀՊՄՀ 54-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, «Մանկավարժ» հրատ., Երևան 2010թ., Պրակ 2, «Գեղարվեստական միտք», թիվ 1, Երևան 2011թ., «Գեղարվեստական միտք», թիվ 1, Երևան 2012թ. և այլն), քննարկվել են գեղարվեստական կրթության ֆակուլտետի գիտատեսաբանական և գործնական գիտաժողովներում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1. Բացօթյա նկարչության դասավանդման գործընթացը գեղարվեստական կրթության համատեքստում համարվում է աշակերտների գեղարվեստական կրթության ապահովման, ինչպես նաև նրանց ստեղծագործական ունակությունների ձևավորման կարևորագույն պայման:

2. Բացօթյա նկարչության դասավանդման պայմանների ուսումնական բովանդակության ամբողջացումը գեղարվեստական մտածողության զարգացման գործընթացի կարևորագույն գործոն է:

3. Հատուկ կազմակերպված մանկավարժական պայմաններում իրականացվող գեղարվեստական կրթության զարգացման գործընթացում ստեղծագործական մոտեցումն անհրաժեշտ է աշակերտի անձի ձևավորման, նրա գեղարվեստական աշխարհընկալման, ճանաչողական որակների հաստատման համար:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել հանրակրթական դպրոցների կերպարվեստի ուսուցիչների վերապատրաստման դասընթացների ժամանակ, կերպարվեստի արվեստանոցներ, դասախոսություններ ու գործնական պարապմունքներ կազմակերպելիս, ուսումնական ծրագրեր մշակելիս:

Անցկացված հետազոտության արժանահավատությունն ու հիմնավորվածությունը որոշարկվել է ձևատեսաբանությամբ, հաստատվել է ստացված արդյունքների վերլուծությամբ, հեղինակի աշխատանքային փորձի ներդրմամբ, փորձարարական աշխատանքների կազմակերպմամբ, որին մասնակցել են ավելի քան 400 աշակերտներ և ուսուցիչներ:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից (120 անուն), հավելվածից: Ծավալը՝ համակարգչային 175 էջ, ներառյալ հավելվածը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ցույց է տրված հետազոտության մշակվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, գիտական վարկածը, նպատակին հասնելու համար լուծված խնդիրները և դրանցով պայմանավորված՝ հիմնական խնդիրներն ու ձևատեսությունները, ներկայացված են աշխատության գիտական նորույթը, տեսագործնական նշանակությունը, հետազոտության հավաստիությունը, հիմնավորվածությունն ու բազան, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության արդյունքների փորձարկումը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Կերպարվեստի ուսուցման գործընթացում սովորողների գեղարվեստական դաստիարակության և կրթության գիտատեսական հիմունքները» խորագրով, բաղկացած է երկու ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում («Բացօթյա նկարչության դասավանդման գիտական հիմունքները սովորողների գեղարվեստական դաստիարակության և կրթության համակարգում») բացահայտված են կերպարվեստի, մասնավորապես բացօթյա նկարչության դասավանդման գիտական հիմունքները: Հիմնավորված է, որ սովորողների գեղարվեստական դաստիարակության և կրթության խնդիրը դարձել է հոգեբանամանկավարժական, փիլիսոփայական, արվեստագիտական հետազոտությունների առարկա: Դիտարկված և վերլուծված են անվանի հետազոտողների աշխատությունները՝ նվիրված սովորողների գեղարվեստական կրթությանը և գեղագիտական դաստիարակությանը: Բացահայտված են «բացօթյա նկարչություն» հասկացության բնութագրումները:

Բացօթյա նկարչությունը դիտվում է որպես կերպարվեստային գործունեություն, գեղարվեստական հատուկ գործընթաց, իրականության նկատմամբ սովորողի գիտակցական վերաբերմունք: Բացօթյա նկարչությունը՝ որպես գեղարվեստական ընկալման և վերարտադրման արդյունք, խթանում է սովորողի գեղագիտական աշխարհայացքի ձևավորմանը:

Բնութագրված և հաստատված է կերպարվեստային գործունեության ինչպես տեսական, այնպես էլ գործնական գիտելիքների առկայության կարևորությունը՝ հիմք ընդունելով նշանավոր հետազոտողների և արվեստագետների կարծիքներն ու ենթադրությունները:

Հենվելով բացօթյա նկարչության դասավանդման առանձնահատկությունների բնութագրման վրա՝ հաստատվում է, որ սովորողների գեղարվեստական կրթության և դաստիարակության պայման է հանդիսանում գեղանկարչական գրագիտության (տեսական և գործնական) հիմքերի գիտատեսական դրույթների իմացությունը, առանց որի գեղանկարչական իսկական ստեղծագործություններ չեն կարող լինել:

Երկրորդ ենթագլխում՝ «Աշակերտների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումը բացօթյա նկարչության պարապմունքներին», դիտարկվում է դպրոցականի անհատականության, ուսումնադաստիարակչական գործընթացում աշակերտների տարիքային առանձնահատկությունների հետազոտության հարցերը, որոնք շարունակական են և առանձնակի ուշադրության արժանի:

Արդի մանկավարժության և հոգեբանության մեջ անձի ձևավորման տարիքային դասակարգումը հիմնված է նրա կենսաբանական և հասարակական էության միասնականացման վրա: Երեխայի անձի ուսուցման, դաստիարակման և բազմակողմանի զարգացման համար հարկ է իմանալ նրա տարիքային և անհատական առանձնահատկությունները:

Կրտսեր դպրոցական հասակը շատ կարևոր փուլ է անձի հասարակական տեսակի ձևավորման գործում: Այստեղ առանձնապես կարևորվում է մտավոր դաստիարակության միասնությունը բարոյական, ֆիզիկական և հատկապես գեղագիտական դաստիարակության հետ: Այս տարիքը շատ զգայուն է գեղագիտական զարգացման, գեղարվեստական ստեղծագործությունների նկատմամբ հակումների զարգացման համար: Եվ ցանկացած պարագայում կրտսեր դպրոցականի հենարանն անձնական զգայական փորձն է, սեփական տպավորությունները՝ կյանքին հարազատ իմացությունները: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է ընտրել, առանձնացնել անմիջական գեղարվեստական ընկալման առարկաները, որպեսզի հնարավոր լինի աշակերտի մտածողությունն ուղղորդել դեպի իրերի ու երևույթների օրինաչափ կապերի գեղագիտական ըմբռնում:

Դեռահասային տարիքը շատ ավելի բարենպաստ է բարոյականության կանոնները յուրացնելու համար, այս հասակում են յուրացվում բարոյականության առավելագույն չափաբաժինը, ճշմարտության նկատմամբ ձգտումը, կեղծելու նկատմամբ անբարյացակամությունը, ընկերության զգացումը: Դեռահասը ցանկանում է ինչ-որ ձևով կարևորվել: Այս ամենը բարձրացնում է նրա կենսունակությունը, զարգացնում ստեղծագործական նախաձեռնողականությունը, ներգրավում հասարակական կյանքի մեջ, ի հայտ են գալիս պատասխանատվությունն ու պարտքի զգացումը: Նշված առանձնահատկությունները դեռահասային տարիքում հատկապես բարենպաստ հիմք են նախապատրաստում դպրոցականի հասարակական դիրքի ձևավորման համար:

Պետք է նկատել, որ այս տարիքում դպրոցականի հետ աշխատանքում կարևորագույն խնդիր է հանդիսանում նրա գործունեության մանկավարժորեն ճիշտ կազմակերպումն ինչպես դպրոցում, այնպես էլ արտադպրոցական միջավայրում՝ նրա նկատմամբ անհատական մոտեցմամբ ու վերաբերմունքով, անհրաժեշտ նրբազգացությամբ և մանկավարժական զսպվածության ու համբերության դրսևորմամբ: Եվ, բնականաբար, կերպարվեստի, մասնավորապես բնանկարի ուսուցման և անձի գեղագիտական դաստիարակության գործում հաջողությունը բացառվում է, եթե հաշվի չառնենք դպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկությունները: Մեր խնդիրն այդ առանձ-

նահատկությունների հաշվառումն է հանրակրթական դպրոցում բնանկարի ուսուցման գործում: Այդ պատճառով էլ աշակերտների տարիքային և անհատական առանձնահատկությունները հաշվի առնելով՝ առաջարկում ենք որոշակի հետևություններ բնանկարի և բացօթյա նկարչության դասավանդման, դաստիարակության ու զարգացման վերաբերյալ՝ հիմք ընդունելով վերը շարադրվածը: Այսինքն՝ դպրոցականի անձի ձևավորման անհատական ու տարիքային առանձնահատկությունների և ուսուցման նպատակների հիման վրա հնարավոր է բացօթյա նկարչության դասավանդման ձևատեսության մշակումը հանրակրթական դպրոցում կերպարվեստի ուսուցման գործընթացին համապատասխան:

Ատենախոսության երկրորդ գլուխը, որը կրում է «Բացօթյա նկարչության դասավանդման մանկավարժական պայմանները հանրակրթական դպրոցում» խորագիրը, բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «Կրթական և դաստիարակչական խնդիրների իրականացման ուղիներն ու ձևերը բացօթյա նկարչության դասավանդման գործընթացում», բացահայտվում են հանրակրթական դպրոցում կրթական և դաստիարակչական խնդիրների իրականացման ուղիներն ու ձևերը՝ հիմք ընդունելով բացօթյա նկարչության դասավանդման գործընթացը:

Հիմնավորվում է, որ բացօթյա նկարչության դասերին ձևավորվում է մարդու վերաբերմունքը բնության նկատմամբ, պարզաբանվում են մարդ-բնություն հարաբերությունները, ինչն էլ արտահայտում է դաստիարակչական նպատակները դպրոցականի անձի ձևավորման գործում: Բացօթյա նկարչության դասավանդման գործընթացում արդյունավետ ճանապարհով նպատակներին հասնելը և ուսուցման խելամիտ ուղղորդումը ենթադրում է այն նպատակների նախասկզբնական շրջափուլի դրույթ, որոնք ներառում են նպատակների ռազմավարական, ինչպես նաև գործադրական և մարտավարական աստիճանները:

Հետազոտությունը բացահայտեց, որ կերպարվեստի ծրագրերի շրջանակներում բացօթյա նկարչության դասավանդման ձևատեսության վերաբերյալ աշխատություններում ու հետազոտություններում դիտարկվում է բնանկարը տարբեր միջոցներով պատկերելու ուսուցման այս կամ այն ձևի կազմակերպման գործընթացը: Գիտատեսական գրականության վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ արդյունավետ ճանապարհով նպատակին հասնելու հարցերը հետազոտված չեն, քանի որ չկա ուսուցման նպատակների շրջափուլային դրույթ, մշակում և իրականացում, առանց որի գործընթացը ցանկալի արդյունքներ չի տա: Ելնելով նրանից, որ այս հետազոտության գործընթացում պետք է դիտարկել աշակերտի անձի ձևավորման և բացօթյա նկարչության դասավանդման հիմնախնդիրները, մենք հիմնավորելու համար ընդունում ենք ուսուցման այն տեսակետը, որով կրթական նպատակները որոշարկվում են որպես գիտելիքների յուրացման աստիճաններ (յուրացման առաջին, երկրորդ և երրորդ աստիճաններ) գիտելիքների այս կամ այն որակների հետ, ուսուցման ձևատեսություններն առաջարկվում են ճանաչողական գործունե-

ության տարիքին համապատասխան (բացատրական-պատկերազարդ, վերարտադրողական, հիմախնդրային շարադրում, մասնակի-որոնողական, հետազոտական):

Անցկացված հարցումների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ բնանկարի ուսուցումը դպրոցում ընթանում է հիմնականում փորձարարական աստիճանում, ինչը հաստատում են ուսուցիչների թույլ իմացությունները բնանկարի տեսության մասին, որին էլ համապատասխանում է սովորողների մոտ ընկալման ոչ հստակ համակարգը և մասնագիտական լեզվի չիմացությունը: Իսկ բնանկարի ուսուցման ժամանակ ուսուցիչների կողմից դաստիարակչական նպատակների իրականացման անհրաժեշտության տարընկալումն արտացոլվում է նաև սովորողների պատասխաններում, ովքեր բնանկարն ընկալում են որպես բնության լուսանկարչական պատկերում՝ առանց վերջինիս նկատմամբ վերաբերմունքի արտահայտության: Հարցման արդյունքները հաստատվում են նաև դպրոցական ուսումնական գործընթացով՝ մեր կողմից կերպարվեստի ավելի քան 150 պարապմունքների դիտման և վերլուծության արդյունքներով:

Դասերի վերլուծությունը ցույց տվեց հետևյալը.

1. Դասի կրթական նպատակը չի հստակեցվում յուրացման աստիճաններով, այլ սահմանափակվում է թեմայի անվանումով (99 %), և միշտ չէ, որ ընկալվում է սովորողների կողմից (59 %), չի դրսևորվում դասի ժամանակ դիտարկված հիմնախնդիրը (60 %): Բնանկարի ուսուցումը կազմակերպելիս սովորողներից պահանջվում է ինքնուրույն աշխատանք, բայց ցույց չեն տրվում նրա կազմակերպման ուղիները (70 %), այսինքն՝ տեղի է ունենում ինքնուրույն գործունեության բովանդակության և ձևի խզում:

2. Դասերի 72 %-ն անցկացվում է յուրացման առաջին, երկրորդ աստիճաններում, ընդ որում երբեմն յուրացման երկրորդ աստիճանը բացասական միտում է դրսևորում, այսինքն՝ առանց յուրացման առաջին աստիճանի սովորողներն անմիջապես դուրս են գալիս յուրացման երկրորդ աստիճան, ինչի արդյունքում ուսուցման գործընթացը որակապես ցածր է: 20 դասերին, որոնց ընթացքում դիտարկվեցին մասնակի-որոնողական ձևատեսության օգնությամբ սովորողներին յուրացման երրորդ աստիճանի դուրս բերելու փորձերը, ստեղծագործական գործընթացի էության մասին ոչ մի խոսք չկա, այդ պատճառով էլ նման խնդիրների լուծումները դասերին եզակի են:

3. Պարզվեց, որ ուսուցիչները հիմնականում ձևավորում են գիտելիքների այնպիսի որակներ, ինչպիսիք են հստակությունը, ամբողջականությունը, համակարգայնությունը:

4. Բնանկարի ուսուցման տարաբնույթ ձևատեսությունների օգտագործումը հիմնականում սահմանափակվում է բացատրական-զարդարարական, վերարտադրողական տարբեր իրավիճակներում, միայն մի քանի հանգամանքներում միավորելով մասնակի-որոնողականը (22 %): Շատ հազվադեպ գործնականում չի տրվում հիմնախնդրային շարադրանքը (12 %):

5. Դիտարկված դասերից ոչ մեկում դաստիարակչական նպատակները հստակ չեն որոշարկվել, առավել ևս խոսք չկա դրվածքի ոչ մի համակարգի մասին, նպատակներն իրականացվում են այն ժամանակ, երբ անհրաժեշտություն է ի հայտ գալիս դասի ընթացքում: Իսկ կերպարվեստի ուսուցման ժամանակ դաստիարակչական նպատակները համարվում են առաջատար, և նրանց դրվածքն ու իրականացումը պետք է պայմանավորեն ուսուցման ողջ գործընթացը:

Այսպիսով, գիտափորձի առաջին փուլը ցույց տվեց, որ բնանկարի ուսուցումը հանրակրթական դպրոցում անցկացվում է փորձնականորեն: Բովանդակության իրականացումը չի ուղեկցվում նպատակներով, իսկ նպատակները մեծամասամբ չեն գիտակցվում ուսուցիչների կողմից, հետևապես, չեն հաղորդվում աշակերտներին: Այդ պատճառով էլ աշակերտների անձի ձևավորման նպատակաուղղվածության մասին խոսելու հնարավորություն չի ընձեռվում տվյալ դեպքում «Բնանկար» թեման ուսումնասիրելիս: Նման գործունեության (ուսուցման գործընթացներ) մանկավարժական ղեկավարումն իրականացնելու համար անհրաժեշտ է իմաստավորել վերոնշյալ եզրահանգումները, գիտակցել և որոշարկել այդ գործունեության նպատակները, իսկ այնուհետև իրականացնել դրանք ուսումնական գործընթացում:

<u>Երկրորդ ենթագլխում</u>՝ «Ուսումնական խնդիրների իմաստավորումը բացօթյա նկարչության գործընթացում», ներկայացվել են գիտափորձի կազմակերպման և անցկացման համար անհրաժեշտ ուսումնական խնդիրների լուծման ճանապարհները: Դիտարկվել է բացօթյա նկարչության դասավանդման բովանդակությունը հանրակրթության պայմաններում, նրա նպատակներին համապատասխան: Դրա համար աղյուսակի տեսքով արտացոլվել է բնութագրող բոլոր մեծությունների առկայությունը (կրթական նպատակների, բնանկարի ուսուցման բովանդակության, ուսուցման ձևերի ժամանակ), ինչպես նաև հստակեցվել է նրանց մեջ առկա փոխադարձ կապը, օբյեկտիվ կամ սուբյեկտիվ առնչությունները:

Կրթական նպատակներին հասնելու համար պարապմունքների ժամանակ կիրառվում են բնանկարի ուսուցման հետևյալ ձևատեսությունները.

1. Բացատրական-նկարազարդական ձևատեսություն՝ գիտելիքների յուրացման առաջին աստիճան (ընկալողական համակարգի բացատրություն, նկարիչների, նրանց բնանկարային գեղանկարչական աշխատանքների կատարման միջոցների իմացություն):

2. Վերարտադրողական ձևատեսություն՝ գիտելիքների յուրացման առաջին, երկրորդ աստիճաններ:

3. Հիմնախնդրային շարադրում՝ գիտելիքների յուրացման առաջին, երրորդ աստիճաններ:

4. Մասնակի-որոնողական հետազոտական ձևատեսություններ՝ յուրացման երրորդ աստիճան:

Դասավանդման ձևատեսությունների կիրառման մեջ հայտնաբերվում է գործունեության բարդության աճի նույն միտումը բացատրական-նկարազար-

դականից՝ վերարտադրողականի, մասնակի-որոնողականի, այնուհետև՝ հետազոտականի, որը գիտելիքների յուրացման երրորդ աստիճան է ենթադրում:

Բնանկարի դասավանդման բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ յուրացման առաջին աստիճանում ընկալվածը հիմք է հանդիսանում յուրացման երկրորդ աստիճանում գիտելիքների յուրացման համար, իսկ սա էլ իր հերթին յուրացման երրորդ՝ ստեղծագործական աստիճանի համար է հիմք նախապատրաստում, ինչը ենթադրում է գիտելիքների և ձևատեսությունների համակցված կիրառություն նոր խնդիրների լուծման համար ինչպես ուսումնական գործընթացը կազմակերպելիս, այնպես էլ ստեղծագործական աշխատանք իրականացնելիս: Այսպիսի կրթական նպատակներ առաջադրելիս ակնհայտ է դառնում յուրացման աստիճանների, գիտելիքների որակի, բնանկարի բովանդակության ու տեսակների, ուսուցման ձևատեսությունների (ըստ գործունեության տեսակների և ուսուցման ժամկետների) հաջորդական բարդացումը: Վերլուծությունից պարզվում է, որ գիտելիքների յուրացման աստիճանների ղեկավարումն ընթանում է խիստ վերահսկողության ներքո, որի խախտումն ուսումնական գործընթացում տրամաբանական փլուզման կհանգեցնի աշակերտների ճանաչողական կենսունակության ձևավորումը, այսինքն ուսուցման գործընթացը կդարձնի անկառավարելի և հենց դրանով կնպաստի նրա որակի իջեցմանը:

Հանրակրթական նպատակների իրականացումը սերտորեն կապված է դաստիարակչական նպատակներին, որոնք ուսուցման գործընթացում կարող են առավել ընդգրկուն դառնալ ուսուցման բովանդակության, դասավանդման կազմակերպման, ուսումնատեսական նյութերի, դասավանդողի անձի միջոցով: Պարապմունքների ժամանակ դաստիարակչական նպատակները ենթադրում են գեղագիտական ու բարոյական այն սկզբունքների իրականացում, որոնք դաստիարակության ռազմավարական նպատակներ են հանդիսանում: Արդյունքում հստակեցվեց բնանկարի ուսուցման ընթացքում աշակերտների դաստիարակչական նպատակների հետևյալ կազմը՝ ա) հայրենասիրություն, բ) բարեխղճություն, գ) հասարակական գիտակցություն, դ) պարտքի զգացում, ե) փոխօգնության ընդունակություն, զ) մարդասիրություն, է) անձի ներքին ազատություն:

Այս նպատակներն ուշադիր վերլուծելու պարագայում սովորողների մոտ բարոյական նշված որակների զարգացումը կարևոր է հասարակության ապագա անդամների համար:

Այսպիսով, ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման համար ուսուցիչը պետք է մասնագիտորեն կողմնորոշվի տեսության մեջ՝ իր գործունեությունը գիտակցորեն կազմակերպելով: Դրա համար նա պետք է գործի համակարգված՝ որոշարկելով ուսուցման նպատակը:

Մեր կողմից մշակված նպատակների համակարգը հնարավորություն է տալիս ձեռնամուխ լինել նմուշօրինակի մշակմանը, որը հիմք կհանդիսանա աշակերտներին բնանկար ուսուցանելու գործում:

Եվ իսկապես, առաջադրվող թեմաների վերլուծությունը թույլ է տալիս նշել, որ ծրագրով հանձնարարվող գիտելիքները ներառում են բնանկարի տեսությունը, կերպարվեստի, ինչպես նաև բնագիտության, գրականության, երաժշտության, պատմության, արվեստագիտության, կենսաբանության, աշխարհագրության առաջադրանքների կատարման գործնական կարողություններ և հմտություններ: Այսպիսով, կերպարվեստի դասերին ստացած գիտելիքները կողմնորոշիչ են հանդիսանում միջառարկայական փոխադարձ կապերի լայն ընդգրկման մեջ:

<u>Երրորդ ենթագլխում՝</u> «Բացօթյա նկարչության դասավանդման փորձարարական ուսուցման միջոցները հանրակրթական դպրոցում», վերլուծվում է դպրոցում ուսուցման նմուշօրինակի կիրառման գործընթացը:

Աշակերտների ուսուցման գործընթացի՝ նախապես անցկացված վերլուծությունը և հաստատող գիտափորձի ընթացքը թույլ են տալիս ընտրված ձևատեսության կիրառելիության պայմաններում եզրահանգել, որ գիտելիքների յուրացման 3-րդ՝ ստեղծագործական աստիճանն առկա է արդեն առաջին դասարանի երկրորդ կիսամյակի վերջում և այնուհետև աստիճանական աճի միտում է ձեռք բերում: Այդ պատճառով էլ մենք նպատակահարմար ենք գտնում աշակերտներին առաջադրել բնանկարի աշխատանքների կատարման համակարգ՝ սկսած 1-ին դասարանից, 3-րդ, 4-րդ և 5-րդ դասարաններում նրանց սովորեցնել կառուցել այդ համակարգը՝ վերջնականապես մշակելով բնանկարի դասերին, որպեսզի 6-րդ և 7-րդ դասարաններում սովորողները կարողանան այն մշակել ինքնուրույն և կիրառեն բնանկարի դասերին իրենց ինքնավար գործունեության մեջ: Այդպիսի պարապմունքներ անցկացվել են 2007-2008 և 2008-2009 ուսումնական տարիներին:

Աշխատանքի նման կազմակերպման արդյունքում ձևավորվում են ինքնուրույնություն, գիտակցականություն, պատասխանատվություն, առաջադրված նպատակի իրականացման պարտավորության գիտակցում, ինքնաստուգում, այսինքն՝ ձևավորվում են ազատ ստեղծագործելու ընդունակությունները: Նման գործընթացում հնարավոր դարձավ բնանկարի դասերին ստեղծել գործունեության նոր համակարգ հիմնականում գիտելիքների յուրացման 2-րդ և 3-րդ աստիճաններում:

Այսպիսով, պարապմունքների անցկացումը ձևատեսական նոր համակարգով լիովին արդարացնում է առաջ քաշված վարկածը գործունեության համալիր պայմանների ստեղծումը և դրանք իրականացնելու ունակությունների զարգացումը հանգեցնում է աշակերտների ստեղծագործական կենսունակության լիարժեք բացահայտմանը, պատկերագրման (բնանկար) ձևի ու բովանդակության միասնությանը, ներառական ուսուցման կայացմանը:

Գծապատկեր 1

Բնանկարի մասին գիտելիքների տիրապետման աստիճանի գնահատականի փոփոխությունն ըստ դասարանների





Վերլուծելով գծապատկերի փոփոխությունները ստուգողական և փորձարարական դասարաններում՝ տեսնում ենք, որ ստուգողական դասարաններում առաջադիմության անընդհատ անկում է տեղի ունենում, իսկ փորձարարականի դեպքում եթե 1-ին և 2-րդ դասարաններում միջին առաջադիմությունը բարձր է, 3-րդ և 4-րդ դասարաններում կտրուկ անկում է գրանցվում, իսկ 5-րդ, 6-րդ և 7-րդ դասարաններում այն բարձրանում է գոհացուցիչ աստիճանի:

Բնանկարի կատարման դրական արդյունքներ 4-րդ և 5-րդ դասարաններում գրանցվեցին միայն նոր համակարգի կիրառման դեպքում: Ընդ որում, ղեկավարման դերն անշեղորեն աճում է, ինչը պահանջում է խիստ գիտական հիմք՝ պարապմունքի նպատակի առաջադրում, յուրաքանչյուր պարապմունքի նախագիծ-ծրագրի մշակում՝ հաշվի առնելով կիրառվող ձևատեսության մատչելիությունը, աշակերտների գիտակցական և կատարողական մակարդակները:

Մշակված ձևատեսությամբ առաջադրված նպատակները կատարողական միջոցների տրված կարգով իրականացնելու համար հաշվի է առնվել աշակերտների եզրահանգումների հաջորդականությունը կրթական նպատակներ իրականացնելիս՝ յուրացման առաջին աստիճան՝ ուսումնատեսական նոր նյութի ուսումնասիրման ժամանակ, յուրացման երկրորդ աստիճան՝ բնանկարի աշխատանքների կատարման գիտելիքների մշակման ժամանակ, յուրացման երրորդ աստիճան՝ ստեղծագործական աշխատանքի կատարման ժամանակ:

Միաժամանակ ցույց տրվեց, թե անձի ինչպիսի որակներ պետք է ձևավորվեն, և ինչպես հասնել այդպիսի որակների ուսումնատեսական նյութերի և դասերի անցկացման միջոցով:

Այս միտումը ներկայացված է 1-7-րդ դասարանների աշակերտների կողմից բնանկարի կատարողական առանձնահատկությունների հարաբերակցության սանդղակում (գծապատկեր 2): Ստուգողական դասարաններում, գործնականում անցնելով յուրացման առաջին աստիճանը, աշակերտներին օգնում են հասնել երկրորդ և ստեղծագործական՝ երրորդ աստիճանի: Եվ եթե այս աստիճանում գործունեության անհատական համակարգ կառուցել աշակերտներին չի հաջողվում, ապա 6-րդ և 7-րդ դասարանցին չի բացահայտում իր ստեղծագործական հնարավորությունները: Այդ դեպքում բնանկարի դասերի 90 %-ը մնում է յուրացման երկրորդ՝ միջին աստիճանում, այսինքն՝ տեղի է ունենում վերարտադրում ըստ օրինակի:

Գծապատկեր 2

Աշակերտների կողմից բնանկարի կատարման կատարողական առանձնահատկությունների հարաբերակցությունն ըստ գիտելիքների յուրացման աստիճանների





Այսպիսով՝ բնանկարի ուսուցման նպատակաուղղված գործընթացը կերպարվեստի՝ որպես ուսումնական առարկայի շրջանակներում ներկայացված է ունակությունների ձևավորման գործունեության նմուշօրինակի ձևով յուրացման երեք աստիճաններում, և վերը շարադրված ձևատեսական համակարգի հիման վրա կարող է անցկացվել հետևյալ հաջորդականությամբ.

- բնանկարի տեսության և պատկերման միջոցների գիտելիքների ձևավորում,
- ինքնուրույն գործունեության համակարգ կառուցելու ունակությունների դաստիարակում և զարգացում,
- բնանկարի պատկերման ունակությունների ձևավորում,
- պատկերման ինքնուրույն աշխատանքի ժամանակ համակարգերի ստեղծման կիրառություն ուսուցչի ղեկավարությամբ,
- ինքնուրույն ստեղծագործական գործունեություն:

Եվ այսպես, գործունեության նմուշօրինակի իրականացումը, այսինք ընդունված համակարգով աշխատանքը ենթադրում է խիստ հաջորդականություն արդյունավետ նպատակների իրականացման ժամանակ ինչպես բնանկարի ուսուցման, այնպես էլ ինքնուրույն աշխատանքի ունակությունների ուսումնասիրման հետ սերտ կապերի ձևավորման ընթացքում: Այսպիսի մոտեցումն ուսուցման գործընթացի կազմակերպմանը թույլ է տալիս սովորողների մոտ ձևավորել ճանաչողական գործունեության գիտակցական համակարգ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Անցկացված հետազոտությունը և գիտափորձի արդյունքների վերլուծությունը թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Վերլուծելով բնանկարի ուսուցման գիտական հիմքերի ժամանակակից համակարգը՝ գտնում ենք, որ մանկավարժական փորձում առկա մոտեցումը բնանկարի պատկերման ուսուցմանը կատարյալ չէ: Դա հանգեցնում է նրան, որ ուսուցման շրջափուլը մնում է անկատար, հետևաբար կարելի է զարգացնել ուսուցման առանձին փուլեր և տարրեր: Ընդ որում, չկան մասնագիտական ձևատեսական ձեռնարկներ, բնանկարն ըստ տեսակների կատարելու համակարգերի մշակումներ:

2. Բնանկարի պարապմունքներին ինքնուրույն գործունեություն կազմակերպելու՝ աշակերտների ունակությունների վերլուծության արդյունքում որոշարկվեցին և հստակեցվեցին սեփական գործունեության գործընթացը կառավարելու և ժամանակի նվազագույն ծախսով առաջադրված նպատակներին հասնելու հնարավորությունները՝ իրատեսորեն օգտագործելով ձևատեսական ձեռնարկները և համակարգերը: Դրանց են առնչվում.

ա) բնանկարի կատարման համակարգայնացման հնարավորությունը,

բ) տեսական նյութի ուսումնասիրությունը,

գ) դասից դուրս կատարված ինքնուրույն աշխատանքների քանակը:

3. Բացահայտվեց, որ պահանջվում է հատուկ մոտեցում ուսուցման նպատակների (բովանդակային-կրթական, դաստիարակչական, զարգացնող) մշակմանը: Նշված նպատակներից յուրաքանչյուրն արդյունավետ աստիճանում ներկայացնում է նպատակների համակարգ, որը մշակված է կերպարվեստի շրջափուլի մեջ բնանկարի դասընթացում աշակերտներին ուսուցանելու և ինքնուրույն աշխատանքների կատարման համար:

4. Մեր հետազոտության տեսական արժեքն ու գիտական նորույթը բնութագրական են հանդիսանում հանրակրթական դպրոցի ուսումնական առարկայի շրջանակներում, որի համար մշակվել են մի շարք նպատակներ (կրթական, դաստիարակչական, զարգացնող): Մշակվել և գիտականորեն հիմնավորվել է բնանկարի պատկերման ուսուցման ձևատեսությունը: Գործնական կիրառություն է գտել կերպարվեստի դասընթացի յուրացման ժամանակ բնանկարի պատկերման ուսուցման արդյունավետ ձևատեսության ստեղծմամբ արտահայտված ձևատեսական համակարգը:

5. Մշակվել է բնանկարի պատկերման ինքնուրույն աշխատանքի ունակությունների ուսուցման ձևատեսություն, որը կառուցվել է մշակված գծապատկերների և արդյունավետ նպատակների հիման վրա: Առաջարկվել են ուսուցման ձևատեսական համակարգեր բնանկարի պատկերման համակարգի կառուցման ընդունակությունների և արդյունքներն ըստ նպատակների վերլուծելու համար: Մշակվել են ղեկավարման նոր պայմաններ բնանկարի թեման ուսուցանելու համար:

6. Հետազոտության ընթացքում հաստատվել է գիտական ենթադրությունն այն մասին, որ բնանկարի ուսուցման գործընթացն ավելի արդյունավետ կլինի, եթե ուսումնական գործընթացում այն իրականացվի մասնագետ ուսուցչի ղեկավարությամբ, համապատասխան տեսական գիտելիքների առկայությամբ:

7. Բնանկարի ուսուցման հիմնախնդրի հետազոտությունը կերպարվեստի ուսուցման ժամանակ կարող է շարունակվել հետևյալ ուղղություններով.

- Առանձնահատուկ այլ ընդունակությունների ձևավորում բնանկարի ուսուցման ժամանակ:
- Բնանկարի պատկերման ուսուցում բացօթյա պայմաններում:
- Ուսուցման գործընթացի հետագա հետազոտման հնարավորություն:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են.

1. Գունատեսության օրենքը հորինվածքի դասավանդման մեջ: «Գեղարվեստական միտք», թիվ 1, Երևան 2005թ., էջ 55-57
2. Իրատեսական պատկերման տեսության կազմավորման պատմական բնութագիր: «Մխիթար Գոշ», թիվ 1, Երևան, 2006թ., էջ 50-53
3. Մշակույթի դասավանդման նպատակներն ու խնդիրները: «Մխիթար Գոշ», թիվ 4, Երևան, 2007թ., էջ 124-131
4. Անհատի ստեղծագործունեությունն ու ինքնադրսևորումը: «Գեղարվեստական միտք», թիվ 1, Երևան, 2008թ., էջ 91-98
5. Գեղանկարչական խնդիրները պլեներային գործընթացում: ՀՊՄՀ 53-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, «Մանկավարժ» հրատ., Երևան 2008թ., Պրակ 2, էջ 63-65
6. Հորինվածքը բնապատկերում: «Գեղարվեստական միտք», թիվ 1, Երևան, 2009թ., էջ 122-124
7. Երեխայի նկարչության հոգեբանությունն ու գնահատումը: «Հոգեբանությունը և կյանքը», թիվ 3-4, Երևան, 2009թ., էջ 95-98
8. Պլեներային ուսումնական գործընթաց (Ձևատեսական ցուցումներ): Հեղինակային հրատ., Երևան, 2009թ., 56 էջ
9. Կերպարվեստի ազդեցությունը երեխայի ստեղծագործական անձի ձևավորման գործում: «Հոգեբանությունը և կյանքը», թիվ 1-2, Երևան, 2010թ., էջ 105-108
10. Գեղանկարչության նախնական ուսուցումը բուհում: ՀՊՄՀ 54-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, «Մանկավարժ» հրատ., Երևան, 2010թ., Պրակ 2, էջ 40-43
11. Գունային երանգ հասկացությունը բացօթյա գեղանկարչության ժամանակ: «Գեղարվեստական միտք», թիվ 1, Երևան, 2011թ., էջ 46-48
12. Գեղարվեստական օժտվածությունը նախադպրոցականների կերպարվեստային գործունեության մեջ: «Գեղարվեստական միտք», թիվ 1, Երևան, 2012թ., էջ 63-66

САРГСЯН СЕВАДА МУШЕГОВИЧ

ОСОБЕННОСТИ ПРЕПОДАВАНИЯ ПЛЕНЕРНОЙ ЖИВОПИСИ В ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНОЙ ШКОЛЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 -«Методика преподавания и воспитания» (изобразительное искусство).

Защита диссертации состоится 30-го мая 2013 г. в 14:00 на заседании специализированного совета 020 ВАК «Педагогика» по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им Х. Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тигран Мец 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Современная педагогика озабочена проблемой формирования гармонично развитой личности, что по нашему пониманию предполагает гармоничность (пропорциональность) деятельности человека с природой, с обществом. Знание тех законов, которыми регулируется эта взаимосвязь, являются основы, которые должны передаваться детям. Воспринимая гармоничность как стремление к идеальному и красивому, педагог должен внушать это ребенку. Поэтому принцип воспитания искусством невозможно разделить от целостной программы гуманизации общества, поскольку искусство включает в себя законы существования человека как частицы природы.

Много негативных явлений общества обусловлены отсутствием моральных идеалов и духовной созидательности. Вернуть все это - самая важная проблема современности. Поэтому необходимо особенно серьёзно относиться к проблеме художественного обучения и эстетического воспитания возрастающего поколения, развивать чувство красоты, используя для этих целей разные учебные предметы и непременно занятия изобразительного искусства. Художественные произведения являются важными компонентами формирования эстетического мировоззрения и художественного вкуса, моральных качеств личности. Все это предполагает систематизированное художественное воспитание школьников, повседневное использование учебно-воспитательных мероприятий, обеспечение связи изобразительного искусства с другими предметами. Содержание учебных программ изобразительного искусства, четко выраженная направленность на реальное искусство оказывают эффективное воздействие на художественное восприимчивость школьников.

Цель исследования является разработка современной методики, экспериментальная проверка, исследовательское и научное обоснование преподавания пленерной живописи в общеобразовательной школе.

Научная новизна исследования заключается в том, что:

1. Выявлены научно-теоретические основы преподавания пленерной живописи в процессе преподавания изобразительного искусства.

2. Определена роль возрастных и индивидуальных особенностей учеников средней общеобразовательной школы в процессе пленерной живописи.

3. Практически разработаны и установлены цели и модели преподавания пленерной живописи в школе, определяя эффективную методику обучения изобразительного искусства.

Теоретическое значение исследования заключается в том, что разработанная на основе развития творческих способностей программа может обеспечить формирование и развитие у школьников художественного образования, эстетического воспитания и познавательных интересов, способствовая раскрытию творческих способностей учащихся.

Практическое значение исследования. Разработана современная методика преподавания пленерной живописи в общеобразовательной школе. Компонентом этой методики является система наглядных, учебно-методических пособий и средств (использование таблиц, методических заданий в процессе пленерной живописи во время уроков и внеклассных занятий и др.).

Достоверность и обоснованность проведенного исследования определены методически, поттверждены анализом полученных результатов, внедрением опыта работы автора, организацией экспериментальных работ, в которых приняли участие более 400 учеников и большое количество преподавателей.

На защиту выносятся следующие основные положения.

1. Процесс преподавания пленерной живописи в контексте художественного образования является важнейшим условием обеспечения художественного образования учеников, а также формирования у них творческих способностей.

2. Цельность учебного содержания условий преподавания пленерной живописи является важнейшим фактором процесса развития художественного мышления.

3. В процессе развития художественного образования, реализованной в специально организованных педагогических условиях, творческий подход способствует формированию личности школьника, его художественного мировоззрения, подтверждения познавательных качеств.

По теме диссертации опубликовано 12 статей.

SEVADA MUSHEGH SARGSYAN

THE PECULIARITIES OF TEACHING PLEIN AIR PAINTING IN SECONDARY SCHOOL

Thesis for the degree of candidate of pedagogical Sciences, specialty 13.00.02 - "Teaching and education Methodology" (Fine Arts).

The defense of the thesis will take place on May 30th, 2013 at 14:00 at the meeting of the specialized pedagogical committee 020 HAC for granting scientific degrees at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. (Address: Yerevan 0010, Tigran Mets str.17).

SUMMARY

The Relevance of the Research. Nowdays pedagogy is concerned with the problem of formation of harmonically developed individual which in our opinion presumes harmony (proportionality) of human activity with nature and society. The knowledge of those laws by which this reciprocal is regulated tie are those grounds which must be passed to children. Perceiving harmony as striving to ideal and beauty the pedagogue must inspire it in a child's soul. Because of it the principle of education by means of art is impossible to separate from holistic program of humanization of society because the art includes the existence of laws of human as a particle of nature.

Many negative phenomena of society are conditioned by the lack of moral ideals and spiritual inner life. To return all these things to society is the most important problem of modernity.

That is why it is necessary to treat seriously to this problem of artistic and aesthetic education of growing up generation, to develop the sensitivity of beauty using for this purpose different educational academic subjects by means of fine arts' lessons. Artistic creation of aesthetic outlook and artistic style are considered to be the most important components for moral qualities of an individual's form. All this presumes coordinated artistic education of schoolchildren, daily usage of academic-educational measures providing ties of fine arts with other subjects. The content of academic programs of fine arts, clear cut orientation of real art influence artistic receptivity of schoolchildren effectively.

The aim of the research is to work out modern methodology of experimental testing, research and scientific substantiation of teaching plein air painting in secondary school.

The scientific novelty of the research:

1. It has revealed scientific-theoretical foundations of teaching plein air painting in the process of teaching fine arts;

2. It has determined the role of age and individual peculiarities of schoolchildren in the process of teaching plein air painting;

3. It has worked out and determines the aim and objectives of teaching plein air painting in secondary school by reinforcing effective methodology of teaching plein air painting.

The theoretical importance of the Research. A program based and tested on the development of creative skills ensures formation and development of the students' art education and cognitive interests, which ultimately reveals their creative skills.

The practical significance of the Research. Modern methodology of teaching plein air painting is worked out in secondary school. The component of this methodology is considered to be the system of visual academic-methodological aids and means (usage of tables, methodological tasks in the process of teaching plein air painting. in class and out-of-school activities.

Validity and Reliability of the Research are determined methodologically, confirmed with the analysis of the obtained results through investing the experience of the author in which more than 400 schoolchildren and a great number of teachers took part.

Defense Postulates:

1. Teaching plein air painting within the context of fine arts education is a crucial prerequisite to ensure the students' artistic education and form their creative skills.

2. Educational integrity of the teaching conditions of plein air painting is a key factor in the development of artistic thinking.

3. Through special pedagogical methods of art education a creative approach is necessary for the development of students' interpersonal skills, artistic perception as well as the formation of their cognitive skills.

Twelve scientific papers were published on the topic of the thesis.



Տպաքանակը՝ 70 օրինակ